նկարագրական տարրերի գերակշռությունը նրա պատկերներում, «հիվանդագին խորհրդապաշտի» հակումների բացակայությունը: Ռ. Զարդարյանը խոսում է նույնիսկ բանաստեղծի լեզվի իրապաշտության մասին՝ դարձյալ նույն իմաստով: Իսկ մյուս բանախոսը՝ Ա. Բարսեղյանը, քննադատում է Վարուժանի ոճամտածողության մեջ ամեն ինչ մինչև վերջ ու ճշգրտորեն, առարկայական մանրամասնություններով նկարագրելու հակումը: Այն ամենը, ինչ բանախոսները ներկայացնում էին որպես Վարուժանի իրապաշտության արտահայտություն, այսօրվա գրականագիտությունն իրավացիորեն դիտում է որպես 20-րդ դարի սկզբի վերածնված ռոմանտիզմի՝ նեոռոմանտիզմի հատկանիշ:

***

Սիամանթոյի «Ամբողջական գործին» նվիրված ասուլիսին իբրև բանախոս հանդես են գալիս Գ. Խաժակը, Դ. Վարուժանը, Ս. Մինասյանը և Ռ. Զարդարյանը: Բոլոր բանախոսների միահամուռ կարծիքով՝ Սիամանթոյի ստեղծագործությունը հայ ժողովրդի ազգային ողբերգության արտահայտությունն է, հայ տառապանքի և հույսի աղաղակը: Այս տեսակետից բանաստեղծի անունը դրվում է Աբովյանի, Րաֆֆու, Գամառ-Քաթիպայի, Ահարոնյանի անունների կողքին:

Սակայն ազատագրական պայքարի երգը Սիամանթոյի ստեղծագործության մեջ, ինչպես նկատում են բանախոսները, թե գաղափարական, թե հատկապես գեղարվեստական առումով հասնում են նոր որակի: «Մինչ իր նախորդները կովի կը դրդեին և ժողովուրդը պայքարի կը հրավիրեին, Սիամանթո, ընդհակառակը, կռիվը կ'երգե»,– ասում է Ռ. Զարդարյանը: «Յարճանյան իտեալացուց կռիվը և անոր գեղեցկության արշալուսային տաճարներ կանգնեց»,– հաստատում է Ս. Մինասյանը: Այս միտքն ավելի է զարգացնում Գ. Խաժակը. «Սիամանթոյի գործերը կու գան հազարերորդ անգամ մըն ալ ինծի համոզելու, որ կարելի է հասարակական մեծ երևույթ մը, մեծ խնդիր մը երգել, նույն իսկ թաղում մը սգալ, կոտորած մը նկարագրել, բռնավորը խարազանել, հերոսություն քարոզել, բայց այնպիսի պատկերներով, որոնք կազմված ըլլան էն բարձր գեղարվեստի պահանջներուն համաձայն»: Այս բոլոր դիտարկումների իմաստն այն էր, որ իրոք, Սիամանթոն թեև սկզբունքորեն